Ծ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի <<Դինամո>> մարզական հասարակական կազմակերպության 2018 թ. պետության կողմից տրամադրվող դրամաշնորհի

<<Դինամո>> Հայկական ՍՍՀ խորհուրդը (ներկայիս Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ) հիմնադրվել է 1925թ. Հայկական ՍՍՀ ներքին գործերի ժողկոմատի մի խումբ աշխատակիցների ջանքերով՝ նպատակ հետապնդելով բարձրացնել իրավապահ մարմինների աշխատակիցների ֆիզիկական պատրաստականության մակարդակը, զբաղվել մատաղ սերնդի ֆիզիկական դաստիրակությամբ, միաժամանակ մասնակցել սպորտի զարգացման գործին:

Ստեղծման օրից առ այսօր <<Դինամո>> ՄՀԿ հավատարիմ ծառայել է իր առջև դրված խնդիրների կատարմանը՝ տրամադրել է իրավապահ մարմինների աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին մարզադահլիճներ, մարզական գույք և մարզչական ծառայություններ, ցույց է տվել մեթոդական և գործնական օգնություն, պատրաստել է լավագույն մարզիկների, որի արդյունքում ունեցել է մեծ սպորտի բնագավառում հսկայական հաջողություններ: Հայաստանի 13 օլիմպիական խաղերի չեմպիոններից 3-ը դինամոյականներ են (Իգոր Նովիկով, Հոկսեն Միրզոյան և Հրաչյա Պետիկյան): <<Դինամո>> Հայկական ՍՍՀ խորհուրդի գործունեության ընթացքում Հայաստանի դինամոյականները մեծ համբավ են վայելել նախկին ԽՍՀՄ-ում և նրա սահմաններից դուրս, դառնալով ԽՍՀՄ-ի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ,

Հայաստանի <<Դինամո>> Մարզական հասարակական կազմակերպությունը (կարճ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ) շահույթ չհետապնդող, ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է իրավաբանական անձի կարգավիճակով, զբաղվում է ուսումնամարզական գործունեությամբ ու երեխաների արտադպրոցական դաստիրակությամբ: Իրավաբանական հասցեն է քաղաք Երևան Վարդանանց 69, գործում է նույն հասցեում: ՈՒՆի մասնանաճյուղեր Գյումրիում և վանաձորում, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տեղերի մարզադպրոցներում:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվել է 12.01.2006թ. գրանցման համարն է՝ 211.171.03736, Վկայականի համարն է 03Ա070509: <<Հառարակական կազմակերպությունների մասին>> ՀՀ նոր օրենքի համաձայն կազմակերպության կանոնադրությունը 22 հունիսի 2017թ. վերագրանցվել է նոր խմբագթությամբ:

<<Դինամո>> ՄՀԿ գործունեությանը դիտարկված է անհրաժեշտ և անհետաձգելի, որի իրականացումը հնարավորը չի իրականացնել սեփական միջոցների հաշվին:

Ծրագրի նպատակը

Ծրագիրի նպատակն է շարունակել և զարգացնել <<Դինամո>> ՄՀԿ բարի ավանդույթները, որոնք են՝

ա/ Հայաստանի Հանրապետության ոստիկանության, նրա ստորաբաժանումների և մյուս իրավապահ մարմինների ծառայողական անձնակազմի հատուկ ֆիզիկական պատրաստականության, ծառայողա-կիրառական մարզաձևերի տիրապետման հմտության բարձրացումն ու կատարելագործումը.

բ/ Հայաստանի Հանրապետության ոստիկանության և մյուս իրավապահ մարմինների աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների ֆիզիկական պատրաստականության համար անվճար մարզադահլիճների, մարզահրապարակների և մարզագույքի տրամադրումը, միաժամանակ անցկացնելով ուսումնամարզական և ուսումնամեթոդական միջոցառումներ:

գ/ Հանրապետական և միջազգային մարզական միջոցառումներին Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև իրավապահ մյուս մարմինների, ծառայողների ու աշխատակիցների մասնակցությունն ու նախապատրաստվածությունն ապահովող աշխատանքների կազմակերպում :

դ/ Հանրապետության ազգաբնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, առողջ և ֆիզիկապես ամուր սերնդի պատրաստում, մանկապատանեկան ֆիզդաստերակության և մարմնակրթության կատարելագործմամաբ, որը հանդիսանում է նաև իրավախախտումների և հանցագործությունների նախականխման արդյունավետ միջոց:

ե/ Բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործում: Աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում, օլիմպիական խաղերում կազմակերպության մարզիկների հաջող մասնակցության նախապայմանների ապահովում:

զ/ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:

է/ Օրենքով սահմանված կարգով առողջարարական և մասսայական ֆիզկուլտուրայի միջոցառումների կազմակերպում:

Կազմակերպությունն իր գործունեության ապահովման համար ունի բռնցքամարտի, ըմբշամարտի, ձյուդոյի, ծանրամարտի, սեղանի թենիսի մասնագիտացված մարզադահլիճներ, ունիվերսալ խաղադահլիճ և բացօթյա խաղահրապահրապարակներ, որտեղ 7 մարզաձևերով մարզվում են 62 խումբ կամ 791 մարզիկներ, որոնցից՝ բռնցքամարտ մարզաձևով 18 խումբ կամ

207 երեխա, հունահռոմեական ըմբշամարտ մարզաձևով՝ 17 խումբ կամ 221 երեխա, ազատ ոճի ըմբշամարտով՝ 11 խումբ կամ 147 երեխա, ձյուդո մարզաձևով՝ 9 խումբ կամ 109 երեխա, սեղանի թենիս մարզաձևով՝ 3 խումբ կամ 46 երեխա, ծանրամարտ մարզաձևով՝ 2 խումբ կամ 28 երեխա և քիք բոքսինգ մարզաձևով՝ 2 խումբ կամ 33 երեխա:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում անվճար հիմունքներով մարզվում են ՀՀ ոստիկանության ծառայողների երեխաներ, Արցախյան հերոսամարտի մասնակից և զոհված ազատամարտիկների երեխաներ, սիրիահայեր, հաշմանդամ երեխաներ, ինչպես նաև ոստիկանությունում հաշվառման մեջ գտնվող դժվար դաստիարակվող երեխաներ, որոնք արատավոր երևույթներից հետ պահելու նպատակով, գտնվում են ՀՀ ոստկանության ծառայողների, անչափահասների տեսուչների մշտական հսկողության ներքո:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում հաճախակի անց են կացվում տարբեր միջոցառումներ, դասախոսություններ՝ նվիրված թմրամոլությանը, <<ՁԻԱՀ>>-ի դեմ պայքարին, այդ թվում նաև <<Ճանաչիր զենքդ, պաշտպանիր հայրենիքդ>> խորագրով միջոցառում, որի նպատակն է դաստիարակել հայրենասեր, հոգով անվախ, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդների:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ օրացույցային պլանի համաձայն՝ անցկացվում են մրցաշարեր՝ նվիրված ՀՀ սպորտի ասպարեզում մեծ ավանդ ունեցող, վաստակավոր մարզիչների՝ հունահռոմեկան ոճի ըմբշամարտի մարզիչներ Ալբերտ Մնացականյանի և Հարություն Խաչատրյանի, Հայաստանում ձյուդո մարզաձևի հիմնադիր, դինամոյական մարզիչ՝ Թելման Քոչարյանի, սեղանի թենիսի մարզիչ՝ Վիգեն Խաչատրյանի, ինչպես նաև Արցախյան հերոսամարտում զոհված դինամոյական մարզիկներ Վաչիկ Մկրտչյանի (բռնցքամարտ), Գագիկ Առաքելյանի (ազատ ոճի ըմբշամարտ) հիշատակներին նվիրված հուշամրցաշարեր: Օրացույցային պլանի համաձայն՝ անց են կացվում նաև պատանիների, երիտասարդների և մեծահասակների <<Դինամոյի բաց առաջնություն>>, որտեղ մասնակցում են թիմեր ՀՀ բոլոր մարզերից, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից:

Աշխարհի, Եվրոպայի և միջազգային առաջնություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկները Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ կողմից պարգևատրվում են պատվոգրերով, մեդալներով, գավաթներով, հուշավերներով, դրամական պարգևներով, մարզահագուստով: Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ում մարզվող երեխաներին տրվում է <<Դինամո>> անդամության անդամատոմսեր, իսկ մարզիչներին վկայականներ, ինչպես նաև կրում են կազմակերպության կողմից տրված <<Դինամո>> տարբերանշանով մարզաշապիկներ:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ-ի կողմից պարբերաբար նորացվում է բոլոր մարզաձևերի համար անհրաժեշտ մարզագույքը՝ ըմբշամարտի գորգեր, ձյուդոյի տատամիներ, գնդակներ,

սեղանի թենիսի ռակետներ, ըմբշամարտի խրտվիլակներ, գիրեր, ծանրաձողեր, մագլցման պարաններ և այլն: Արդյունքում <<Դինամո>> մարզահամալիրը մշտապես համալրված է ժամանակակից մարզական և տնտեսական գույքով, որտեղ տաք ջրամատակարարման առկայությամբ շաբաթական 4 օր ոստիկանության տարբեր ստորաբաժանումներից ամսվա կտրվածքով մարզվում են մոտ 5000 ծառայողներ: ՀՀ ոստրկանության մարտական ֆիզպատրաստականության բաժինը իր ստեղծման իսկ օրից անվճար զբաղեցնում է <<Դինամո>> ՄՀԿ 10 աշխատասենյակ օգտվելով էներգետրկ (էլեկտրաէներգիա և ջեռոցում), կոմնալ և կապի (հեռախոս, ինտեռնետ) ծառայություններից:

ՀՀ ոստիկանության օրացուցային պլանով հաստատված մարզական միջոցառումների ու առաջնություններ զգալի մասը (շախմատ, սեղանի թենիս, մինի ֆուտբոլ, վոլեյբոլ և սամբո մարզաձևերից) անց են կացվում <<Դինամո>> մարզահամալիրի տարածքում, իսկ տվյալ ժամանակահատվածի կոմունալ և Էներգետիկ (էլեկտրաէներգիա, ջեռոցում տաք ջրամատակարարում) ծախսերը հոգում է <<Դինամո>> ՄՀԿ:

Ելնելով ՀՀ ոստիկանության կողմից հաստատված գրաֆիկի, <<Դինամո>> մարզահամալիրում են անցկացվում ոստիկանության ծառայողներից ընդունվող ֆիզպատրաստականության ստուգրքների գերակշռող մասը: Ֆիզպատրաստականության ստուգրքների ամփոփման ժամանակ լավագույն արդյունքներ ցույց տված ոստիկանության ստորաբաժիններն ու ոստիկանները <<Դինամո>> ՄՀԿ կողմից պարգևատրվում են հուշանվերներով, գավաթներով, պատվոգրերով և այլ պարգևներով, միաժամանակ բարձր գնահատական ստացած ոստիկանների նկարները փակցվում են պատվո տախտակին:

<<Դինամո>> մարզահամալիրում անվճար մարզվում են նաև ոստիկանության աշխատակիցների ընտանիքի անդամները:

Աճող սերնդի մեջ արևելյան մարտարվեստի զարգացման նպատակով Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ և ներոհիշյալ արևելյան մարզաձևերի ֆեդերացիաների միջև ստորագրեված է համատեղ գործունեության հուշագրեր:

Հայաստանի ազգային քիք-բոքսինգի մարզաձևի, Հայաստանի <<Մուայ-թայ>> մարզաձևի, Հայաստանի <<Կենտրոն>> ազգային ավանդական կարատե-դո մարզաձևի, Հայաստանի ավանդական ուշու մարզաձևի, Հայաստանի այկիդո-այկիկայ մարզաձևի, համահայկական Կիոկուշին-կան կարատե-դո մարզաձևի, շոտոկան կարատե-դո մարզաձևի Երևան քաղաքի, Հայկական <<Այկիկենդո կարատե>> ֆեդերացիաների հետ համատեղ, մարզական պրոպկանդայի նպատակով, տարվա ընթացքում, պարբերաբար, <<Դինամո>> մարզահամալիրում կազմակերպվում է նշված արևելյան մարզաձևերից՝ մրցաշարեր, փառատոներ և ցուցադրական ելույթներ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն ու մուքերը

ՀՀ կառավարության կողմից, պետբյոջեից տրամադրվում է ՀՀ <<սպորտի և երիտասարդության հարցերի>> նախարարության միջոցով նվիրատվություն, որը բավարարում է միայն մարզչական կազմի և մարզահամալիրը սպասարկող անձնակազմի մի մասի աշխատանքի վարձատրությանը:

Մարզահամալիրի պահպանման ու շանագործման, կոմունալ սպասարկման, մարզական միջոցառումների, կազմակերպության գոյատևման հետ կապված մյուս ծախսերը, ինչպես նաև էներգետիկ ծախսերի մի մասը իրականացվում է <<Դինամո>> անդամավճարներից և գույքի վարձակալությունից ստացված մուտքերի հաշվին: Մարզահամալիրը սպասարկող անձնակազմի մյուս մասի աշխատանքի վարձատրությանն ու էներգետիկ ծախսերի մնացած մասը իրականացվում է ՀՀ կառավարության 28-ը դեկտեմբերի 2017 թ. N 1717-Ն որոշմամբ՝ Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ տրամադրված պետական դրամաշնորհի հաշվին:

Ծրագրի կատարման կարգն ու ժամկետներն

Ելնելով <<Դինամո>> ՄՀԿ գործունեության բնույթից ծրագրի կատարումը կրում է շարունակական բնույթ: Մարզահամալիրը գործում է ամբողջ տարի, բացի օգոստոս ամսից, քանի որ նշված ամսում իրականացվում է շինության ընթացիկ կամ հիմնանորոգումները; <<Դինամո>> ՄՀԿ կողմից ծառայությունների մատուցումն ՀՀ ոստիկանության աշխատակիցներին ու նրանց ընտանիքի անդամներին իրականացվում է ամբողջ տարում, բացի վերը նշված ամսից, իսկ ոստիկանության ստորաբաժինների միջև անցկացվող մրցուների և առաջնությունների, ՀՀ ոստիկանության ՄՖՊ կողմից անցկացվող ստուգարքների համար մարզահամալիրի տրամադրումը իրականացում է ՀՀ ոստիկանության կողմից հաստատված գրաֆիկի ու օրացուցային պլանի համաձայն: Տարվա ընթացքում, որոշակի ժամկետով ըմբշամարտի մարզադահլիճը՝ ըմբշամարտի 3 գորգերով տրամադրվում է ՀՀ ոստիկանության զորքերին մասնագիտական պարապունքների անցկացման համար:

Հայաստանի <<Դինամո>> ՄՀԿ
Նախագահի առաջին տեղակալ Գ. Հայրապետյան

ՖՏ բաժնի պետ Լ. Սաֆարյան